

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթոլիկ եկեղեցու համար կարծէք մեր ժամանակը ուղիղը է մի նոր շրջանի: Յրանսկայում՝ չընայեաժ Պապի շրջաբերականի, յաջողութեամբ առաջ է տարւում եկեղեցին՝ պատու թիւնից անջատելու գործը և եկեղեցական գոյքի ցուցակագրութիւնը, որի ժամանակ տեղ տեղ պատահում են նոյն իսկ ընդհարումներ, բայց շնորհիւ Ֆրանսիական ոտակականութեան և գործի խիստ կարգապահութեան՝ անցնում են առանց արիւնհեղութեան:

Լեհաստանում, կաթոլիկ եկեղեցու այդ հարադատ աշխարհումն էլ սկսուել է կրօնական մի նոր շարժում: Այնտեղ հանդէս է եկել «մարիալիտ» կոչուած ազանդը, որը մերժում է կուսակրօնութիւն, մերժում կաթոլիկ եկեղեցին և մտցնում աստուածապաշտութեան բոլորովին առանձին կուլտ: Այս երեւոյթը մեծ մտահոգութիւն է պատճառել վատիկանին, որը հրամանադրել է ամեն կերպ աշխատել այդ աղանդի առաջն առնելու համար: Կալիշում արքեպիսկոպոսի նախագահութեամբ տեղի է ունեցել կաթոլիկ հոգևորականութեան համաժողով, որտեղ քննուել է մարիալիտների վերաբերեալ գործը: Որոշուել է նորից փորձ անել մարիալիտներին վրայ ազդելու յորդորներով և հարցը գիտնականօրէն պարզելու համար ընտրել առանձին մասնաժողով: Մարիալիտները գրքերն ու բրօշուրները կաթոլիկական վարդապետութեան համապատասխան չեն: Որոշուել է, որ այն քսէնզը—կաթոլիկ քահանան, որին մարիալիտները կուղենան հեռացնել, չը պէտք է թողնի իւր տեղը, եթէ միայն բռնի չեն հարկադրել նրան այդ բանի: Ծայրահեղ դէպքերում վճռուել է գործադրուել նաև կանոնական իրաւունքով թոյլատրած պատիժներ:

